ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 6

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած ընդլայնված գործակարգավարական խորհրդակցության

15.06.2026թ. **ք.Վանաձոր**

Նիստը վարում էր մարզպետ Ա.Մկրտչյանը.
Մասնակցում էին
Ա.Ղարիբյանը -մարզպետի տեղակալ
Լ.Աբրահամյանը - մարզպետի խորհրդական
Հ.Ադամյանը - մարզպետի խորհրդական
Հ.Հակոբյանը - մարզպետի օգնական
Է.Կռոյանը - մարզպետի օգնական
Մ.Դալլաքյանը - գլխավոր քարտուղար
Կ.Ադամյանը, Ա.Շիրինյանը, Ռ.Պողոսյանը, Ա.Երիցյանը, Ռ.Մարգարյանը, Մ.Խեչումյանը, Ա.Թումանյանը, Ա.Հակոբյանը, Լ.Մաթոսյանը, Է.Հախվերդյանը, Ա.Բեջանյանը, Գ.Մելիքսեթյանը, Ա.Մալոյանը - մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ

Օ ր ա կ ա ր գ ո ւ մ՝

1. **Նախորդ ժամանակաշրջանի ընթացքում կատարված աշխատանքների և տրված հանձնարարականների վերաբերյալ հաշվետվություն**
   /զեկուցող Լոռու մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ/
2. **Այլ հարցեր**:

Ելույթ ունեցավ ՀՀ Լոռու մարզպետ Ա.Մկրտչյանը, նա ներկայացրեց նախորդ ժամանակաշրջանի ընթացքում կատարված աշխատանքների և տրված հանձնարարականների վերաբերյալ տեղեկատվություն:

ՀՀ Լոռու մարզպետի տեղակալ Ա.Ղարիբյանը, մարզպետի խորհրդական Լ. Աբրահամյանը, աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ Ռ.Մարգարյանը, Մ.Խեչումյանը, Ա.Շիրինյանը, Ա.Թումանյանը ներկայացրեցին կատարված աշխատանքների և տրված հանձնարարականների վերաբերյալ տեղեկատվություն:

Լոռու մարզպետը հանձնարարեց.

1. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալ Ա.Ղարիբյանին, աշխատակազմի քաղաքաշի-նության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ Ռ.Մարգարյանին՝

Անհրաժեշտ վերահսկողություն սահմանել Վանաձոր համայնքի կողմից կազմված և ներկայացված սուբվենցիոն ծրագրերի կատարման, դրանց առաջնահերթության և ընթացքի վերաբերյալ:

2. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ Ռ.Մարգարյանին՝

Ներկայացնել տեղեկատվություն մարզում իրականացվող շինարարական աշխատանքների ընթացքի, դրանց ժամկետների և կատարողականի վերաբերյալ:

3. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետ Մ.Խեչումյանին՝

1-օրյա ժամկետում ներկայացնել համեմատական տեղեկատվություն 2021 և 2026 թվականների Ազգային Ժողովի ընտրությունների արդյունքների վերաբերյալ՝ ըստ տեղամասերի և համայնքների:

4. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Ա.Շիրինյանին՝

Ներկայացնել տեղեկատվություն մարզի համայնքների կողմից սեփական եկամուտների հավաքագրման ընթացքի և արդյունքների վերաբերյալ:

5. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ Ա.Թումանյանին՝

Վերսկսել Լոռու մարզի համայնքներում կազմակերպվող և անցկացվող շրջայցերը՝ գյուղատնտեսական և սուբվենցիոն ծրագրերի լուսաբանման, պարզաբանման, ուսումնասիրության և վերահսկման նպատակով, կազմակերպել քննարկումներ և հանդիպումներ ազգաբնակչության հետ և ներկայացնել տեղեկատվություն՝ իրականացված աշխատանքների վերաբերյալ:

Ստորագրող
ԱՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ
1204920311

2026-06-15 14:26:39 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ՝ **Ա.ՄԿՐՏՉՅԱՆ**

Արձ. Ս.Մակարյան
Հեռ. 0322 /4-32-99